



Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ո՞վ է Գրիգոր Նարեկացին, Նարեկի տաղանդավոր հեղինակը:

Գր. Նարեկացու մասին կենսագրական շատ քիչ տեղեկություններ են հասել մեզ: Նա եղել է Նարեկա հուշակավոր վանքի միաբաններից մեկը: Նրա հայրը Անձևացյաց խոսրով եպիսկոպոսն էր, որը իր ժամանակի ակառավոր եկեղեցականներից մեկն էր և որը հայտնի է մեր եկեղեցու ժամակալությունը բարեկարգելու իր դրավոր մի շարք աշխատություններով: Նրա «Մեկնությունն սրբոյ պատարագին» գիրքը մինչև վերջին ժամանակները եղել է հոգևոր պաշտոնյաների միակ ուղեցույցը: Գրքի ամենավերջին հրատարակությունը կատարվել է 1860 թ. Ս. Էջմիածնում, Մատթեոս կաթողիկոսի օրով: Ինքնին հասկանալի է, թե մանուկ Գրիգորն ինչպիսի ազդեցություն տակ պիտի գտնվեր մանկական հասակից սկսած: Հետագայում հայրը նրան ուղարկում է Նարեկա վանքի դպրոցը և նա այնտեղ է անցկացնում իր ամբողջ կյանքը: «Յայտմառութիւն» այսպես է դրում Գրիգորի մասին. «Մնեալ և վարժեալ սրբութեամբ և իմաստութեամբ առոտս Անանիայ վարդապետի, առաջնորդի Նարեկայ վանից ի Ռչտունիա»: Այստեղից պարզ երևում է, որ խոսրով եպիսկոպոսը իր որդի Գրիգորին մանուկ հասակից հանձնել է Անանիա Նարեկացու խնամքին: Գրիգորը Անանիայի եղբոր աղջկա որդին էր: Ահա թե ինչ է դրում Գր. Նարեկացին Ապարանից խաչի և Աստվածածնի ներդրողների հիշատակարանում. «Եւ Գրիգոր յետին վարժապետաց և կրտսեր բանասիրաց, որդի դստեր եղբոր հօր Անանիայի

հոգեղարդ և մտավարժ փիլիսոփայի և ըստ վարուց մաքրութեան կրօնից դուրսից և հուշակելոյ»: Նույն այս հիշատակարանից իմանում ենք, որ նույն Նարեկա վանքի միաբան է նաև Գրիգորի մեծ եղբայր Հովհաննեսը. «Յիշատակեսցես զիս և զեղբայրն իմ անդրանիկ զՅովհաննէս ցանկալի անուն ի միում կարգի, որ գիտնականն է և հանճարեղ իմաստասէր քան զիս առաւել յամենայնի»: Երկրորդ հիշատակությունը, որ անում է Գրիգորը եղբոր մասին, գրված է հուշակավոր «Ողբերգություն» վերջում. «Եւ Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց, դարձակցութեամբ եղբոր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ Նարեկայ մեծախառ և բարձրապատիւ ուխտի վանականի, որք իբրև զմի մարմին բանականն ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարուելով, ոչ միայն հաւրդատեց, այլ և միաշունչեք, միակրօնեք, համապատիւք, զուգահաւանք, ի քսութից աչաց առ միեկնոյն շաւիղ խորհրդոց տեսնալք»: Այս հիշատակությունից պարզորեն երևում է երկու եղբայրների լիակատար և միանման տեսակետներն ու խոհերը կյանքի և կրոնի վրա, որովհետև եղբայրների չորս աչքերը միեկնույն շափիղն ու միեկնույն խորհուրդներն են տեսնում:

Նարեկացի եղբայրների ուսուցիչն ու դաստիարակը՝ Անանիա Նարեկացին եղել է համբավավոր և խիստ պատրաստոված մարդ: Նա թողել է Ս. գրքին վերաբերող մի շարք ճառեր ու մեկնություններ: Պայքարել է թոնդրակեցիների դեմ և եղել է իր ժամանակի ամենաականավոր եկեղեցականը: Հասկանալի է, թե ինչպիսի ազդե-

ցություն պիտի թողնե՞ր նա Նարեկացի աղբայրների վրա:

Երա ուրբ և ո՞րտեղ է ծնվել Նարեկացին, հայտնի չէ: Չամչյանը նրա ծնունդը աշխատում է 951 թվին, Մանուկ Աբեղյանը՝ 940 թ., իսկ ամենաուշը՝ 949 թվին: Այս բոլորը ենթադրություններ են միայն և ելյում են «Ողբերգություններ» ավարտելու, այսինքն 1001 կամ 1002 թվականից, որի արդեն «Ողբերգություններ» ավարտված էր և պատրաստ: Եվ որովհետև «Ողբերգություններ» մեջ Նարեկացին իր մասին հիշատակում է, թե «Եթե հասցի յամս ծերութասս» և այլն, ենթադրում են, թե այդ նախադասությունը գրելիս նա հավանորեն պիտի լիներ 58—62 տարեկան: Այս հաշվով հետ դնալով որոշում են նրա ծննդյան թվականը: Այսպիսի հաշվիներն ու ենթադրությունները հիմք չեն կարող ծառայել ասելու, թե նա ե՞րբ է ծնվել:

Սակայն 977 թվականին նա արդեն հռչակվել էր որպես գիտնական, որովհետև այդ նույն ժամանակ Գուրգեն Արծրունին՝ Անձևացյաց թաղապետը խնդրում է Նարեկացուն գրել «Նորդ երգոցի» մեկ-նությունը:

Դրանից ընդամենը 6—7 տարի հետո, 984 թվականին, Անեցին գրում է. «Փայլէր իբրև դարեգալն իմաստութեամբ ու առաքինութեամբ սուրբ այրն Աստուծոյ Դրիգոր Նարեկացի»:

Որ, հիշադրել, Նարեկացի եղբայրներն իրենց իմաստությամբ և առաջադիմությունով մեծ փառքի են հասնում, երևում է նաև նրանից, որ Անանիա Նարեկացու մահից հետո վանքի վանահայր է ընտրվում Հովհաննես Նարեկացին: Լամբրոնացին Նարեկացուն այսպիսի բնորոշում է տալիս՝ «Աստուածաշնորհ և յողունց գերադանց հրեշտակն ի մարմնի»:

Այսպիսի դոմահատականը Նարեկացին ստանում է իր բարեպաշտությամբ, նվիրվածությամբ և մտքի այն հակադաս պաշարով, որ նա այնքան առատորեն և սրտաբուխ, այնքան անկեղծորեն և հավատով գրել է իր երկերում: Նրա ստեղծա-

ղործական ուժը և աշավոր է և անհատնում, նրա տրամաբանությունը և ուժեղ է, և խորտակվել, նրա բոսքը և անկեղծ է, և զարարելի, իսկ նրա հավատը անսահման է և անուշ, նրա երկյուղածությունն ու ողբերը զսկծացուցիչ են, մորմոքող և միաժամանակ մխիթարող, հուսադրող և քաջալերող: Նրա ստեղծված մի տողի մեջ աղոթող մարդը տեսնում է իրեն, դառնում այնտեղ իր ներքինը: «Նարեկը» աղոթող և հայատաքցալ մարդու հոգու գիրքն է: Նարեկացու վառը չէր կարող չստեղծել թշնամիներ, և բնական է, որ այդ թշնամիները պիտի ամենից առաջ դուրս դալին հոգևոր դասից:

Նարեկացու դեմ, որպես հայ եկեղեցու ալմուղական սկզբունքներից շեղվողի, դատ են սկսում նրա հակառակորդները և նրան հայածում որպես հերձվածողի, որպես եկեղեցին պառակտողի: Այդ այսպես է նկարագրվում «Յայամաուրքը»-ի մեջ. «Ժողովեալ ի մի վայր եպիսկոպոսունք և իշխանք, ազատանօք և տանուէրօք, յղեալ կոչեցին Գրիգոր Նարեկացին առ ի դատել և յանդիմանել հրապարակաւ և աքսորել զնա պատուհասիւ որպէս զհերձուածող» (էջ 394): Սակայն ոչ այս դատի տեղն է հայտնի և ոչ էլ դատող հոգևորականները և իշխանները: Սրանից պիտի դալ այն եղբայրացություն, որ փորձեր են եղել ստեղծելու Նարեկացու դեմ ամբաստանություններ, բայց դրանք չեն հաջողել: «Յայամաուրքի» համակրությունը Նարեկացու կողմն է, քանի որ այնտեղ գրված է. «Որովհետև նա ամենայն փութով աշխատում էր ուղղել եկեղեցուն տիրող խանդավառ կարգը, ուստի մի քանի նախանձող չարախոսեցին նրա մասին եպիսկոպոսների և իշխանների մոտ և այդ ճամարիտ վարդապետին կոչեցին «ծայթ և հերձուածող»:

Այնուհետև «Յայամաուրքը» պատմում է, թե ինչպես պատվիրակներ են ուղարկվում Նարեկացուն բերելու: Նա եկողներին սիրով ընդունում է և հրավիրում է սեղանի նստել: Նրանց առաջ դը-

նում է աստակած աղալներն, եկողները հրաժարվում են միս ուտելուց, հայտնելով որ օրն ուրբաթ է: Նարեկացին ներողություն է խնդրում և առաջարկում է իր հյուրերին աղսթել, որ աղալները թռչեն: Հյուրերը հրաժարվում են: Այդ միջոցին Նարեկացին խաչակնքում է սեղանը և աղալները թև են առնում ու թռչում:

Այս ավանդությունը ստեղծագործության նյութ է դարձրել Հովհաննես Թլկուրանցին և նկարագրել խիստ բնորոշ կողմերով:

Դատի կանչողները, բնականաբար, ակնածում են և լուծթյամբ հեռանում, իսկ դատաւարությունը տեղի չի ունենում:

Որ հիրավի Նարեկացին նախանձորդներ և թշնամիներ ունեցել է, այդ նշված է նրա «Ողբերգութեան» մեջ: Նա 29 քանի մեջ գրում է. «Յիշէ՛ա զոր ի մարդկային աղն է զթշնամիս մեր ի բարի: Մի՛ բարկացես նոցա վասն իմ. ներեա՛ յանցանաց նոցա» և այլն: Նշանակալից են թռչնամիները վերաբերյալ հետևյալ բառերը. «Արդարապես, ոմանք առ մեզ միասակաբազոյնք սակաւութեմ, թերեւ և յիրաւի բամբասերոց... մի՛ սատակեցես զիման խածանողան»:

Նարեկացու մահվան ճիշտ թվականը նույնպես հայտնի չէ. մեք պատմաբանները այդ թվականը նույնպես որոշում են ննթադրություններով: Ըստ Չամչյանի նա մեռած պիտի լինի 1003 թվին, իսկ ըստ Չարհանեկյանի՝ 1011 թ.: Ինչպես Օրմանյան արքեպիսկոպոսը, նույնպես և երջանկահիշատակ Մանուկ Աբեղյանը լուծթյամբ են անցնում այս հարցի վրայով:

Մեր ժողովուրդն իր սիրեցյալ դավալին անմահ է համարում: Ըստ ժողովրդական ավանդության Նարեկացին մտել է մի քարայր ճգնելու: Երկար սպասելուց հետո, մարդիկ տեսնում են, որ Նարեկացին քարայրից դուրս չի գալիս: Մտնում են քարայրը և տեսնում, որ այնտեղ մարդ

չկա: Համատեցյալ ժողովրդի հայացքով այդպիսի սուրբ անձնավորությունը չէր կարող մեռնել, նա կարող էր միայն երկինք բարձրանալ:

Նարեկացին մեր եկեղեցու կողմից դավալ է սրբերի կարգը:

Նարեկացու գրական փառքը կազմում են նրա «Ողբերգութիւնը» և տաղերը: Այստեղ Նարեկացին հանդես է գալիս ոչ միայն որպես հանճարեղ ստեղծագործող և մտածող, ոչ միայն որպես կյանքը հրաշքիորեն վերլուծող և հոգեվոր կյանքի հետ կապված հակասությունները մերկացնող ու պարզաբանող, այլ և ուժեղ տրամաբան, հմուտ ճարտասան և զգայուն ու խոհուն բանաստեղծ: Բանաստեղծական ավյունը, ճշմարիտ և անկեղծ խոսքը, Աստծու հետ հասակորեն, համարձակ և նույնիսկ հանդուգն կերպով դատելը, մարդկային թրջվառությունը և բարոյական անանկությունը հրապարակ բերելն ու դատապարտելը, Գերագույնի ողորմածությանն ու մեծահոգությանն ապալինելը կազմում են նրա կրոնական քերթվածի հիմնաքարը: Նարեկացու ճշտումը բարձրացնելու մարդուն, հալածի և հույսի պատվանդանի վրա դնելու նրան և նրա միտքն Ամենակատարյալի բարոյական սկզբունքներով բացատրելը կազմում են Նարեկացու գրքի, նրա քնարական քերթվածի բովանդակ էությունը: Նա Աստուծոյ առաջ ջերմ, խոնարհ աղոթող է, հավատի կատարյալ մարմնացում, տիրոջը նվիրված հառաչանք, մորմոք ու աղերս, սակայն և ըմբոստ, պայքարող, պահանջող, պարտադրող և ակնկալող: Համընդհանուր հասկանալի կյանքի իդեալով, ոգեշնչված անմահության դադարաբով, նա պահանջում է հայր Աստծուց խոստացված անմահությունն ու արքայությունը: Նա բողոքում է, որ մարդն ստեղծվել է թերի ու անկատար, որ մարդն ստեղծվել է միայն «ըստ պատկերի քում» և նրան չի պարզվել աստվածային ստեղծագործ ուժը: Մարդն ստեղծվելով միայն «ըստ պատկերի» և ոչ ըստ «էություն» Աստուծո, օժտվել է այնպիսի հատկություն-

ներով, որ նա պետք է շինվի իր ճշմարիտ ընթացքից և դառնա հանցավոր: Նարեկացին այսպես դատելով պահանջում է, որ Աստված մարդուն հասցնի իր բարոյական կատարելության: Այս է կազմում աղոթող Նարեկացու ողբի հիմնական սկզբունքը: Հիշարվի, իսկական ողբերգություն է ապրում մեծահանճար բանաստեղծը, նա հավատում է Աստծուն և հոգու անմահության, դադարիտին, սակայն նա տեսնում է նաև մարդուն իր հոգեկան ակտիվությամբ, որոնք չեն կարող նրան դարձնել անմահ: Անմահին հասնելու համար մարդուն անհրաժեշտ է բարոյական, անբախիր կյանք, մաքուր կենցաղ, առաքինի վարք, հոգու ու մտքի կատարելություն, իսկ մարդն ըստ Նարեկացու զուրկ է այդ բոլորից: Այստեղից սկսվում է հենց այն հակասությունը, որ կա մարդու կյանքի ու ձգտումների և Աստծո պահանջների միջև: Այստեղից էլ սկսվում է Նարեկացու ողբերգությունը, նրա, հոգու տրտելիքներ: Սակայն ի՞նչպես հաշտեցնել հակասության այս երկու ծայրերը: Եվ Նարեկացին գտնում է հակասությունը վերացնելու ելքը: Քանի որ անհրաժեշտ է մարդու էությունը նոր ձևակերպության ենթարկել, հետևապես մարդը պարտավոր է հաշտվել իրականության հետ, սակայն միաժամանակ նա պետք է ձգտի կատարելության և Աստծու ողբի լինելու կոչման: Դրա համար մարդը պետք է վարի աստվածահաճո կյանք: Նա պիտի հրաժարվի աշխարհիկ կյանքի հաճույքներից, խեղդի իր մեջ դարձնող մարդկայինը, ապրի հոգևոր կյանքով և շնչի միայն նրանով: Այդ դեպքում Աստված կների նրան և նա կարժանանա հավիտենական անմահական կյանքին:

Աղոթող և դղյացող մարդուն ներելու հանդամանքը Նարեկացին նախ մեկնում է նրանով, որ Աստված բարի է, դժած և ողորմած, մեծահոգի և բարեբար: Ներման պայմանները բոլորում են հենց նրա էությունից: Երկրորդ՝ որ մարդուն նա ստեղծել է «ըստ պատկերի իւրում»: Եվ մարդուն ստեղծելով անկատար, Աստված պետք

է կատարելության հասցնի նրան: Իսկ մարդն այդ ղիտակցելով պարտավոր է ղինվել հոգեկան առաքինություն, նմանվել Աստծուն, հասնել կատարելության: Իր աստվածաբանական այս տեսությունը երկուստեք զուգակցելով պարտավորությունների և պարտաճանաչության՝ երկյակ դրություն է ստեղծում, Աստծուն պարտավորեցնում է ներել, դժալ և ողորմել, մարդուն պարտադրում է խոստովանել, աղոթել և ներումն խնդրել:

Հափշտակված անհայտնելի և հավիտենական կյանքի իղևալով, որին մարդը պիտի արժանանա մահից հետո, Նարեկացին ընկնում է կատարելալ ինքնամոռացության և հափշտակության մեջ հանուն այդ կյանքի, որի հանդեպ աշխարհը, աշխարհիկ կյանքը իր հաճույքներով կորցնում է իր արժեքը: Ծիշո է, Նարեկացին բացարձակ ճշմունցություն չի քարոզում և չի պահանջում, սակայն բարեպաշտ և ջերմհոտանդ հավատացյալ ապաշխարող քրիստոնյա լինելը նա իր ստեղծագործության մեջ դնում է որպես հիմնական խնդիր:

Նարեկացին իր ստեղծագործությունն անվանում է «Ողբերգություն»: Այդ ողբերգությունը, որ «ի խորոց սրտի» խոսք է ուղղված Աստծուն, սկսվում է այսպես. «Ձայն հառաչամաց հեծուլքայն սրտի, ողբոց աղաղակ քեզ վերընծայեմ տեսող դադարենաց: Եվ մատուցեալ, եղեալ ի հուր թախծութեան, անձին տոչորման, զպտուղ ըղձից ճենճերոյ ատամեալ մտացս, բուրվառա կամացս առաքել առ քեզ: Այլ հոտոտեսցիս, հայեսցիս, դժած, քան ի պատարազն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդութեան: Ընկալ դասկաւամանեայ բանիցս յողուած քեզ ի հաճութիւն և մի՛ ի բարկութիւն. ելցէ ի խորոց աստի դաշութեանց խորհրդակիր սենեկիս վաղվադակի ժամանել առ քեզ կամաւորական նուէր բանական զոհիս ողջակիղեալ զօրութեամբ ճարպոյ, որ յիսն է սարարտութիւն: Եւ ի դնելմ իմ ընդ քեզ դատ խառնեալ աղերսիւ, հօր, մի՛ իբրեւ զհամարձումն ձեռաց ամբարշտեալն Յակոբու, ըստ

բողոքելոյն նստակայ և զաներաւութիւն խաբէրոնի տալտկալի քեզ երեւեցի» (Բան առաջին, Ա.):

Սրանք Նարեկացու առաջին խոսքերն են ուղղված Աստծուն, նրա հետադա ստեղծադործությունների նախարանը կամ Աստըծու հետ խոսակիւք նյութերի ծրագիրն ու ամփոփումը:

Չպետք է աչքաթող անել այն, որ նա Աստծուն ուղղած իր առաջին մըմունքները համարում է հեծություն և հառաչանք, ողբ և աղաղակ, որ ցույց է տալիս, թե նա ունի հոգեկան վիշտ ու տանջանք, որ նա վարակված է ներքին զգացումների ինչ որ կսկիծեցուցիչ, խաթող, նրա ողջ էությունն արեւոմուղ ահռելի վշտով և որ այդ զորավոր և մշտական վիշտը տատանում է նաև նրա միտքը, խլում նրա հոգու և մտքի հալասարակչութիւնը: Սակայն ինչո՞ւ է այդպես վերաբերվում: Նա ցանկանում է, որ զաղտնեաց տեսնողը շոշափելիօրեն միանա իր հետ, զգա, տեսնի տանջանքների ամբողջութիւնը, նրա ահափորութիւնը: «Այլ հոտոտեսցիս, հայեսցիս ի պատարաքն բոլորապտուղ ծրխոյն բարդութեան»: Այո, Աստված պիտի զգայուն էակ, կենդանի մարդ դառնա, ինչպիսին է Նարեկացին, և թափանցի նրա բարդ տանջանքների էության խորքերը: Եվ քանի որ Նարեկացու ստեղծադործության հոգւածաշարքը կադմում է նրա ներքինի լրել արտահայտութիւնը, որ այն Նարեկացին պատկերում և նկարագրում է այնպես, ինչպես որ կա, ուստի պարտաւորվում է խնդրել Աստըծուն, որ հաճութեամբ ընդունի իր ասածները և ոչ բարկութեամբ: Որովհետեւ այն, ինչ պատմում է Նարեկացին, բղխում է նրա սրտի խորքերից. «Եցէ ի խորոց աստի խորհրդակիր սենեկիս (այսինքն սրտից), վաղվաղակի ժամանել առ քեզ կամաւորական նուէր բանական զոհիս ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ, որ յիսն է պարարտութիւն»: Պարարտ ճարպի զորութիւնը Նարեկացու ներքին զգացում-

ներն են: Բանաստեղծը պատկերավոր ձևով է խոսում, որպեսզի ընթերցողի համար պարզ և շոշափելի դարձնի իր զգացումները: Իր սիրտը համարում է «Ձոր-շրջակիր սենյակ», որ լի է անհուն զգացումներով, իրեն համարում է բնական զոհ. զոհը խարույկի վրա բոցավառվում է և նրա ծովն ու ճանճերը բարձրանում են առ Աստված, որ նա հոտոտի տեսնի և մարդու տանջանքները լիակատար կերպով լմբւնի ու զգա:

Նարեկացու էությունը, նրա միտքն ու հոգին, նրա անհուն զգացումներն ու խռնիւրը, նրա արեւոմ և փրփրաղեղ հույզերն ու ներշնչումները ամփոփված են նրա ողբերգության մատյանում: Այս մատյանը հոգեվոր երգերի, բանաստեղծութիւնների մի հսկա շղթա է. նրա յուրաքանչյուր տունն ունի իրեն հատուկ բույրը, յուրատեսակ գեղեցկութիւնն ու վեհութիւնը: Նարեկացին զարմանալի ճկունութեամբ հոգեկան ուժի կախարդիչ ուժգնութեամբ և կարողութեամբ կարողանում է հոգեւոր կյանքի և մարդկային կյանքի հակասութիւնները, նրա բարդ կենսիկները լուծել հոգեւոր հավերժական ճշմարտության, այն է՝ հոգեւոր մարդկային առաջադիմության, հոգեւոր մարդու կատարելության: Ահա նրա ողջ պատմական և իրական արժեքը, ահա նրա մշտենջեան կան լինելու դադանքը:

Չնայելով Նարեկացին մանուկ հասակից մինչև յուր մահը փակվել է վանքում և կրել հիացմունք առաջացնող տքնութիւն, որպես հսկող, այնուամենայնիվ նա լայն ծանոթութիւն: Ունի աշխարհիկ կյանքի բոլոր կողմերի չհետ: Նա իր ստեղծադործության մեջ շոշափում է այս կողմերը, դիտում և քննադատութիւն ենթարկում: Չկա մարդկային հոգու ու մտքի, սրտի ու զգացումների մի խորհ, որ անծանոթ լինի նրան:

Իր ողբերգության մատյանում Նարեկացին պարզորեն դնում է մարդու ինքնաճանանչության, ինքնաքննադատության

խնդիրը: Մարդը իր բարոյական կյանքի սկզբունքները ինքը պիտի մշակի և գործադրի, իսկ այդ սկզբունքները ինքնակատարելութեան հասնելու անհրաժեշտ սկզբունքներն են: Եվ այդ նա պիտի անի և իրագործի շնորհիվ այն իմաստութեան ու մտքի, այն հանձարի, որ տրված է նրան: Նարեկացին մարտնչում է հենց մարդու կատարելութեան համար:

Որպեսզի առհասարակ լրիվ դաշտավար կազմենք մարդու կատարելութեան համար մարտնչող Նարեկացու ներքին զգացումների մասին, անհրաժեշտ է կանգ առնել հետեւյալ պարբերութեան վրա. «Ձի եթէ դիժ մի ծովուց ի յորակութիւն դնող յեղեղեցից, և դրաչառ առպարիսօք բաղմօք սահմանալ ի տարածումն լայնութեան քարտնել չափեցից և զսլուրակս յոքունց անտառաց շամբից՝ եղեգանց ի հատուածս դոյութեան գլխաց կաղմեցից, և ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ դրով սահմանի դրաւել: Նա՛ դի թէ զմայրս Լիբանանու ի մի լուծ կշռոց զօղեցից, և կամ զլեւան Արարատեան ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնր հարթութեամբ համադուպակցել» (Բան իններորդ, Ա.):

Այնուամենայնիւ հետաքրքրականն այն է, թե Նարեկացին ինչո՞ւ է այսպիսի ահռելի չափազանցութիւններ զիմում, արդո՞ք ի՞նչ իմաստով է զիմում այս ահալոր և սոսկալի չափազանցութեան, ինչո՞ւ է մարդուն այս աստիճանի նսեմացնում: Այդ մեղ համար ինքնին հասկանալի կլինի, եթե վերհիշենք Նարեկացու հիմնական մտադրութիւնը, նրա երկի էութիւնն ու կենսորոն կազմող հրատապ խնդիրը:

Նա համեմատութեան է դնում մարդուն Աստծու հետ, նա ցանկանում է մարդուն աստվածացնել, նրան հասցնել աստվածային կատարելութեան՝ մարդու մեջ ամփոփելով այն բոլոր առաքինութիւնները, այն ողջ բարոյականը, որ վերադրվում է Աստծուն: Այսպիսի նպատակադրում տեսնելով պիտի ընդունել, որ Նարեկացու հա-

մեմատութիւնը ճիշտ է և չափազանցութեան խնդիրն ինքնին վերացած: Եվ հիրավի, եթե մարդը թոթափի Նարեկացու նշած արատները և դառնա առաքինի, պարզ է, որ նա հասած կլինի կատարելութեան, այսինքն կաստվածանայ: Ահա թե ի՞նչպես է դնում խնդիրը Նարեկացին և ի՞նչպես պիտի հասկանալ նրան:

Իր աղոթքներում դնելով աստվածանալու խնդիրը Նարեկացին մարդու առաջ բարոյական կատարելութեան հասնելու անընդհատ վերելքներ է բաց անում և մարդուն դնում մարտնչողի դերում: Բալական է հավատալով միայն, հավատալով և տեղում հանգիստ նստելով ոչինչ ձեռք չես բերի, — դրում է Նարեկացին, — այլ պետք է և՛ հավատալ, և՛ գործել, և՛ սիրել, և՛ սրայքարել սիրո պտուղները քաղելու և վայելելու համար: Դրա համար հարկավոր է ինքնամոլորվել, հավաքել ներքին ուժերը, հոգեւոր ուղղութեամբ լարել և ձեռք բերել պահանջվող առաքինութիւնները: Այս առաքինութիւնները նույնպես երբեք իրենք իրենց չեն ստեղծվում և չեն տրվում մարդուն: Մարդն այն ձեռք պիտի բերի համապատասխան կենցաղով և պայքարով: Այս ձեռք միայն մարդը կարող է կատարելութեան հասնել, մոտենալ Աստծուն և աստվածանալ: Այս կապակցութեամբ Նարեկացին դրում է.

«Իսկ ես ոչ միայն կարգամ, այլ նախ հաւատամ մեծութեան նորին և ոչ եթէ վասն պարզեաց նորա մատուցեալ յողորդեղեթիմ, այլ իբր զկենդանութիւն իսկապէս, և զշնչոյ տուրեւտութիւն հաւաստի, առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութիւն, զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանօք բերեմ: Ոչ ի տուրան, այլ ի տուղն յաւէտ կարօտիմ. ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբուրելի, և ոչ կենացն փափազանօք, այլ կենարարին յիշատակաւ միշտ ճննձերիմ, ոչ վայելիցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք յերկամանց աստի կականիմ. ոչ զհամդիւտն խնդրեմ, այլ զհանգուցչին զերեստ արաչեմ. ոչ հար-

նարանին խնճոյիւք, այլ փեսային անձկութեամբ մայիմ: Ի ձեռն որոյ զօրութեան վստահապէս ակնկալութեամբ վերադրեցեալը յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ ի կարողին ձեռն ապաստանեալ, ոչ քաւութեան միայն հասանել, այլ զնոյն ինքն աեսանել յողորմութիւն և ի գթութիւն և յերկնիցն ժառանգութիւն, թէպէտ և յոյժ եմ տարադրելիս:

Ինչպէս տեսնում ենք, այս սողերի մեջ Նարեկացին ամփոփում է իր վառ, անսասան և համապարած հալատն ու սերը առ Աստված: Այդ հալատն անսահմանափակ է և բոլորում է նրա սրտի խորքից, նրա ողջ էութիւնը: Այս խնդրում նա միացնում է իր միտքն ու հոգին, իր կամքն ու մտածողութիւնը և սիրոյ ու նրվիրականութեան լիակատար զգացումներով փարփում է Աստծուն, միանում նրա հետ:

Աստվածանալու տենչը Նարեկացու մեջ անդուսպ է ու աննահանջ, քանի որ այդ է կազմում նրա «Ողբերգութեան» էութիւնը, նրա աղոթքների մեջ հիմնականը: Հենց այդ իմաստով նա գրում է. «Ձեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քոյ աջոյ ընկալ և մատով՝ քաշեալ և սրբեալ զիս զամենապարտուս՝ Բանդ կենդանի՝ առ հաւասարապատիւ քո հոգի, զի քե փրատին հաշտեալ յիս դարձցի: Եւ ի ձեռն քո իւրովն կամօք մաքուր նուիրեալ զօրեղն աքնութեամբ զիս հօր ընծայեալ անդէն առ նմին նովիմք միշտի քեզ շնչոյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ ի քեզ միառաւ տնքածանելի» (Բան քսաներորդ, Գ.): Նա խնդրում է իրեն ընդունել, քալել, սրբել իր հոգով և անբաժանելիորեն միացնել յուր հետ. «Ի քեզ միանալ անբաժանելի»:

Գիտակցելով աստվածային ուժի գոյութիւնը մարդու ներքին աշխարհում, չմոռանալով մարդու մերձավորութիւնը Աստծու հետ և նրան միանալու վերջնական նպատակը, որով և վերջակետի պիտի հանգի յուր ողբերգութիւնը, Նարեկացին դալիս է այն եղբակացութեան, որ մարդկային հանցանքները ինչպէս որ հեշտութեամբ են ծնւում, նույնքան և հեշտութեամբ են վի-

րացվում, եթե մարդը տալրում է ներքին պայքար, ինքնաքննադատութիւն և եթե նա կարողանում է ինքնամփոփել յուր ուժերը և կատարելութեան ձգտել: Այս բերումով նա գրում է հետեւյալ եղբակալիչ սողերը. «Ինչպիսի դայն ամենայն դունեա չարութեան բանասարկութիւն զօրաց սակաւ մի արտօսը կաթուածոց աչաց, իբր զճճիս զեռունս բազմոտանիս խղայթից երկրի տկար խլրտմանց անկեալ ի վերայ ծորումն ձիթոյ կամ դոյզն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ. և դոյզն մի հառաչումն սրտի հեծութեան երեալ ի յողոյ, իբր զշնչումն հարաւային ջերմութեան խառնեալ յարեու, զսառնամանեաց սատակութիւն հալէ. քանզի ըստ միումդ՝ նմանութեամբ հեշտածինք են, ըստ միւսումդ զխաղաղութեան դիւրամեղք» (Բան յոթերորդ, Ա.):

Այսպիսով ուրեմն Նարեկացին համոզւած է, որ «սակաւ մի արտօսը կաթուածոց աչաց», «դոյզն դեղ ինչ սատակչական» կամ «դոյզն մի հառաչումն սրտի հեծութեան երեալ ի յողոյ» բաղական են մարդուն աղատելու: Նարեկացին այս եղանակով բաց է անում Աստծուն մոտենալու, կատարելութեան հասնելու ճանապարհը և վերացնում այդ ճանապարհի վերա գտնելով որ արդեւ չենք:

Նարեկացու քննադատող միտքը արթուն է և զորավոր, նա չի խնայում մարդուն Աստծու վերաբերմամբ իր ունեցած անպարտաճանաչութեան և հանդիմութեան մեջ, նույնպէս չի խնայում Աստծուն մարդու վերաբերմամբ ցուցաբերած վերաբերմունքի մեջ: Բացատրելով Աստծուն միանալու հնարավորութիւններն ու պայմանները բարոյական ինքնադասման և ինքնամփոփման միջոցով նա չի ներում մարդու դողողութիւնը, ամբարտաւանութիւնը, սոխոտութիւնը և վայրենութիւնը ու գրում է. «Ի մէջ դիւտութեանս անպատշաճականս զնացի, զարտուղի սխալեալ դժնդակապէս և այս է ամենայնիւ ամենայն իւրօք մեղանչելն: Ըստ սահման կշռութեան կամաց քոց արտաքս վազեցի, որ է հաւաստին կերպարան բախր անօրէնութեան:

Անգլիտիցն չափոց չարութեան դործոց լրումըն յաճախութեան նիւթեցի, որ է ճշդիւս պատկեր յանցաւորութեան: Սպառնացար և ոչ դարձուեցայ. արդահատեցեր և ոչ երբէք լուայ, որ է ապստամբութեան յայտնի նշանակ» (Բան քսաներորդ, Ա.):

Ինչպիսի անաչառությամբ դատապարտում է մարդուն, նույնպիսի անկեղծությամբ քննադատում է նաև Աստուծուն: Ահա այդ տողերը. «Քեզ արդարութիւն հանդերձեցեր, բարեբար, և ինձ ամօթ և պատկառանս պատրաստեցեր, քեզ փոքոս վախշականս, և ինձ նախատինս՝ յարմարաւորս, քեզ քաղցրութեան յիշատակ և ինձ մաղձ քացարկեալ ի կատարածի, քեզ բարեբանութիւն անլուխի և ինձ ձայնս ողորց աղաղակի, քեզ օրհնութիւնս երգոց խնկելի և ինձ մերժումն տարազրութեան, և քեզ իրաւունս բաղմարժանիս և ինձ պատասխանատուութիւնս ամենալարանս, և քեզ բարձրութիւնս անճառ դովեալոց, և ինձ դաժին լիզելոյ պատիժ ձաղանաց» (Բան քսաներորդ, Ա.):

Ինքնին հասկանալի է հակադրությունը: Հակադրվելու այս պարագայից հենց բղխում է և նրա խիստ քննադատությունը: Այն դալիս է մարդուն «բոստ էութեան» չըստեղծելու, այլ միայն «բոստ պատկերի» ըստեղծելու սկզբունքից: Այս քննադատությունը Նարեկացին հասցնում է իր դաժնակեանքին, երբ նա գիտակցում է իր անկատարելությունը. «Արդ, յիշեալ զքո մեծութիւնդ, տէ՛ր, նայեցեալ ի յիմա անարդութիւն. և ընդ խնդրելս իմ ի քէն բարի խոցն ատելեաց, և դու առ քոյս ըստ քում մեծութեանդ անճառելիս հրաշագործեացես: Մի՛ սատակեացես դիմսն խածանողսն, այլ փոփոխեացես խելալ դիտանա բարս երկրաւորս, զբարիսն արմատացուցես և յիս և ի նոսին» (Բան ութսուներորդ, Ա.):

Խնդրելով իր թշնամիներին բարիք անել, իրեն խաթոզներին ու խածոդներին չսատակեցնել, այլ փոխել, կարծես թե դրանով պարտավորեցնում է Աստուծուն նույնպէս մարդու հանդեպ տոհմասարակ ներք-

դամիտ լինել: Եվ, արդարեւ, եթե մարդն այդպէս է իր ատելիներին նկատմամբ, ապա ի՞նչպէս պետք է լինի Աստուծոյ իր որդիների նկատմամբ, որոնց ինքն է կյանքի կոչել: Այս նախադրուշացումն անկուց հետո Նարեկացին շարունակում է. «Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս և ես խաւար և յիմար, դու խոյութեամբ բարի և գովելի, և ես համայնիւն չար, ապիկար, դու տէր ստորիցս և երկնի, և ես անիշխան շնչոյս և հոգւոյս, դու բարձրեալ ի կարեաց գատեալ, և ես տաժամաւոր և վտակ գաւար, դու ի վեր բան գկիրս երկրիս, և ես կաւ անարգութեան, գարշաւքեան, դու ըստ մարդարէին մնաս յախտեան յանբաւ բարձրութեան և ես միշտ կորնչիմ բոստ մոլորի բանին. ի քեզ ոչ է մթութիւն կամ մեկգութիւն և ես բաւանդակն իսկ իցեմ, որ զաւանդն իմ ոչ պահեցեմ» (Բան ութսուներորդ Բ.):

Բողոքելով այս ահալոր տարբերութեան դեմ, Նարեկացին արդար ցատումով համակված բացականչում է. «Հէ՛մն դիս ի բանտէս, արձակեմ ի կտալանացս, դե՛րժ ի շղթայէս, փրկեմ ի խեղդմանէս, աղատեմ ի տաղնապէս, քակեմ ի յերկաթիցս, լո՛յժ ի պաշարմանցս, արտաքսեմ յերկմտութեանցս, սփոփեմ ի տխրութեանցս, հանգո՛ ի նեղութեանցս, փարատեմ ի վշտացս, հանդարտեմ ի խռովութեանցս, ապաքինեմ ի լաւոյս, մերժեմ ի հեծութեանցս, հեռացո՛ ի յողորցս, կաղդուրեմ ի կականմանցրս» (Բան ութսուներորդ Բ.):

Անընդհատ կրկնելով աստվածանալու և աստվածացնելու իր մրմունջները Նարեկացին պարզապէս ձգտում է միանալ Աստուծոյ հետ և Աստուծուն միացնել իր հետ: Իրեն համարելով տիեզերական ողու մի մասնիկը, որ ունի միտք, հոգի, չունչ, ուժ և բանականութիւն, այդ միացումը համարում է բացարձակապէս հնարաւոր:

Հողվածի սկզբում նշվեց, որ ժամանակակիցները միտքն են Նարեկացուն դատել և նրան որպէս հերձվածող հեռացնել հայ եկեղեցուց: Ահա թե որտեղ են գտնու-

վում այլ դժգոհությունների արժատները: Բնական է, որ շատ հետամնաց հայ եկեղեցականներ չէին կարող թափանցել Նարեկացու մտքի խորքերը և հասկանալ, լուրձնել նրան:

Նարեկացին ոչ միայն ծանոթ է եղել իր ժամանակակիցներին, այլ և նրանց կողմից սիրված մարդ է եղել, արժանի ամենայն հարգանքի և պաշտպանութան: Հետագա սերունդը չէ, որ նրան սրբացրել է և դրել սրբոց դասը, այլ նրա ժամանակակիցներն են այլ արել:

Նարեկը իր ժամանակին ժողովրդակա-նացած ընթերցանության դիրք է եղել Հայաստանում: Դա մի դիրք է, որը ներդրելով արարչագործական ստեղծագործությունը տիեզերքի, չնչավոր և անկենդան ընդթյան վերաբերյալ, ներդաշնակում է մարդկային կյանքը, մարդու անձն ու հոգին արարչական ուժի հետ, որպես նրա մեծության և առեւելության, ահալորու-

թյան և ամենակարողության, իմաստության և գերիվերո զորության մի մասը: Նարեկը բաց է անում դռները և ցույց է տալիս այն ճանապարհը, որով մարդը՝ չնչին արարածը կարող է մուտք գործել մշտնջենականության խորանը և միանալ նրա հետ: Նարեկը մարդու հոգեկան ապրումները, լարվածության, ինքնամոռացումի ամփոփումն է. նրա մեջ զգալու, խորհելու, պայքարելու և հաղթանակելու ընդունակ մարդը դուրս է և տեսնում վեհագույնը, կատարյալն ու հավերժականը, որին կարող է հասնել ինքը:

Նարեկը մարդու աստվածացումն է: Նարեկի վիշտը, որ ըզխում է Նարեկացու հոգու զորությունից, նրա մտքի գերազանց կարողությունից, նրա աստվածանալու անհաղ փափագն է, մարդուն կատարելության հասցնելու սիրաբորբոք տենչը: Այդ է նրա էությունը:

ՌՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՊԵՑ

